ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Մանկամահացությունը երկրի զարգացման մակարդակը, բնակության կյանքի որակը բնութագրող ժողովրդագրական և առողջապահական կարևորագույն ցուցանիշ է, որն իր հերթին պայմանավորում է բնակչության որակին առնչվող մի շարք կարևորագույն ցուցանիշների փոփոխման միտումները: Ներկայումս ՀՀ բնակչությունը բնութագրվում է ժողովրդագրական ծերացմամբ և ծնելիության փոքր մակարդակով պայմանավորված խնդիրներով: Պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը վերջին տասնամյակում կրճատվել է տարեկան միջինում 0,33 տոկոսով կամ շուրջ 10 հազար մարդով, իսկ ծնելության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով կրճատվել է 1,6-ով կամ 12 տոկոսով: Բնակչության ծերացման գործակիցը տարեկան միջինում ավելացել է 2,6 տոկոսային կետով. 2020թ. տվյալներով 15տ. ցածր 100 բնակչի հաշվով 60 և բարձր տարիքի բնակչության թվաքանակը կազմել է 72, ապա դրանից 10 տարի անց՝ արդեն 91, ինչը վկայում է ՀՀ բնակչության ծերացումը:

Պետք է արձանագրել, որ 0-14 տարեկան երեխաների մահացության մեջ զգալի տեսակարար կշիռ ունի մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը՝ 2010թ. 74տոկոս, 2019-ին՝ 62 տոկոս: Բացի այդ, ՀՀ-ում զգալիորեն նվազել է մեկ կնոջ հաշվով ծնվող երեխաների միջին թվաքանակը՝ պտղաբերության գործակիցը:

Այս համատեքստում, մանկամահացության ցուցանիշի համակարգված վիճակագրական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի և կարող է նպաստել այս ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը միտված միջոցառումների մշակմանն ու կենսագործմանը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության շրջանակներում հեղինակի կողմից սահմանվել է հետևյալ նպատակը. մանկամահացության ցուցանիշի և դրա վրա ազդող գործոնների վիճակագրական վերլուծության միջոցով մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների բացահայտումը և իրավիճակի համալիր գնահատումը:

Ատենախոսության նպատակից բխում է հետևյալ խնդիրների առաջադրումը.

- ուսումնասիրել մանկական մահացության գործակցի հաշվարկման մեթոդաբանությունը,
- ուսումնասիրել ՀՀ-ում մանկամահացության ցուցանիշի դինամիկան ըստ սեռի և բնակավայրի, բացահայտել զարգացման հիմնական միտումները,
- մանկամահացության ցուցանիշի սեզոնային տատանումները և դրա հիման վրա իրականացնել գիտականորեն հիմնավորված կանխատեսումներ,
- բացահայտել և վերլուծել մանկական մահացության պատճառների կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ մարզերում և ք. Երևանում,
- բացահայտել կյանքի առաջին տարում մահացածների թվաքանակի փոփոխության վրա մահվան առանձին պատճառների ազդեցության չափը,
- բացահայտել մանկամահացության, սոցիալ-տնտեսական և առողջապահական բնապահպանական գործոնների միջև եղած փոխկապվածությունը,
- իրականացնել ՀՀ մարզերում և ք. Երևանում մանկամահացության և դրա վրա ազդող գործոնների վերլուծություն կլաստերային եղանակով:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 134 էջ ծավալով, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մանկամահացության վիճակագրական ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմունքները» գլխում մանկամահացությունը դիտարկվել է

կարևորագույն ժողովրդագրական ցուցանիշի դիրքերից, ներկայացվել է մանկամահացության ուսումնասիրության զարգացման պատմությունը, մանկամահացության և դրա ածանցյալ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Մանկամահացության ցուցանիշի ուսումնասիրությունը ժամանակի և տարածության մեջ ՀՀ տվյալներով» գլխում հեղինակը կատարել է մանկամահացության ցուցանիշի դինամիկայի ուսումնասիրություն և կանխատեսումներ, ներկայացրել է մանկամահացության ցուցանիշի սեզոնայնության վերլուծություն և համապատասխան կանխատեսումներ, նաև՝ վերլուծվել են մանկամահացության պատճառների կառուցվածքային տեղաշարժերը:

Ատենախոսության երրորդ՝ «Մանկամահացության վրա ազդող գործոնների վիճակագրական ուսումնասիրությունը ՀՀ տվյալներով» գլխում կատարվել է ինդեքսային մեթոդով մանկամահացության հիմնական պատճառների վերլուծությունը, ուսումնասիրվել է մանկական մահացության և դրա վրա ազդող գործոնների փոխկապվածությունը, նաև իրականացվել է մանկական մահացության և դրա վրա ազդող համալիր գործոնների կլաստերային վերլուծություն:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության մեջ մինչև մեկ տարեկան երեխաներն են, իսկ առարկան՝ մանկամահացության ցուցանիշը՝ վիճակագրական վերլուծության մեթոդների համատեքստում:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը պայմանավորված է տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերի պատշաճ ձևավորմամբ:

Հետազոտության տեսական և մեթոդական հիմքը ՄԱԿ համակարգում ԱՀԿ կողմից մշակված ստանդարտներն ու նորմերը, ՀՀ Վիճակագրական կոմիտեի մեթոդական պարզաբանումները, հետազոտվող թեմային առնչվող տնտեսագետ-վիճակագիրների գիտական հրապարակումներն ու աշխատությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ՎԿ ամսական, եռամսյակային տեղեկատվական զեկույցները, վիճակագրական ժողովածուները, միջազգային

կազմակերպությունների կողմից հրապարակված վիճակագրական տարեգրքերը, ժողովածուները, ՀՀ օրենքներն ու այլ իրավական ակտերը:

Ատենախոսության մեթոդական գործիքակազմը ներառում է բացարձակ, հարաբերական, միջին մեծությունների և վարիացիայի ցուցանիշների, փոխկապվածությունների և ժամանակային շարքերի ուսումնասիրության և կանխատեսման, ինչպես նաև ինդեքսային մեթոդները: Ելակետային տվյալների վիճակագրական վերլուծությունը կատարվել է վիճակագրական վերլուծության ծրագրային փաթեթների գործադրմամբ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Հետազոտության հիմնական արդյունքները հեղինակն առանձնացրել է գիտական նորույթի հավակնություններ ունեցող հետևյալ կետերում.

- կիրառվել է մանկական մահացության և ֆետոինֆանտիլային կորուստների հաշվարկման տարբեր մեթոդներ և տրվել դրանց գնահատականը ՀՀ մարզերի կտրվածքով,
- ՀՀ-ում մանկամահացության սեզոնայնության բացահայտման նպատակով ուսումնասիրվել է մանկամահացության գործակիցն՝ ըստ ամիսների և դրա հիման վրա բացահայտվել մանկական մահերին նպաստող առավել վտանգավոր ամիսները,
- մանկամահացության տարածվածության մարզային նկարագիրը բացահայտելու նպատակով վերլուծվել է մանկական մահերի հիմնական պատճառների կառուցվածքն՝ ըստ ՀՀ մարզերի,
- ինդեքսային մեթոդի կիրառմամբ բացահայտվել է ՀՀ-ում կյանքի առաջին տարում բոլոր պատճառներից մահացած երեխաների թվաքանակի փոփոխության վրա մահվան առանձին պատճառների ազդեցության չափը,
- հիմնավորվել է մանկամահացության և դրա վրա ազդող գործոնների փոխկապվածությունները,
- բացահայտվել և առանձնացվել են այն մորզերը, որոնք ըստ ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, առողջապահական և բնապահպանական գործոնների ձևավորում են առանձին կլաստերներ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Հեղինակի կողմից նշված առաջին նորույթի շրջանակներում կատարվել է մանկական մահացության և ֆետոինֆանտիլային կորուստների գործակիցների հաշվարկը ըստ մարզերի և ք. Երևանի: Կարծում ենք, որ հայտնի բանաձևերի կիրառմամբ գործակիցների հաշվարկը, տվյալ դեպքում՝ ՀՀ տարածքների մակարդում, գիտական նորույթի կարող է հավակնել խիստ վերապահումով:
2. Մանկամահացության սեզոնայնության ուսումնասիրությունը կատարվել է հաշվետու ժամանակահատվածին նախորդող երեք տարիների տվյալների վրա հիմնվելով: Կարծում ենք, որ դիտարկվող ժամանակահատվածը բավականին կարճ է՝ ցուցանիշում առկա սեզոնայնության վերհանման, առավել ևս՝ ստացված արդյունքների հիման վրա կանխատեսումներ կատարելու համար: Հարկ է նաև նկատել, որ հատկապես վերջին տարիներին ամենատարբեր հետազոտողների կողմից հիմնավորվում է մանկամահացության երևույթում սեզոնայնության չեզոքացման հանգամանքը, ինչը դիտարկվում է որպես մանկամահացության գործակցի նվազման ուղղակի հետևանք: Կարծում ենք, որ այս հանգամանքը աշխատանքում լրացուցիչ ուսումնասիրության առարկա պետք է հանդիսանար:
3. Հարկ ենք համարում որոշ վերապահումներ արտահայտել նաև աշխատանքի 3.3 ենթագլխում կատարված կլաստերային վերլուծության և դրա արդյունքների հետ կապված: Կլաստերային վերլուծության գործիքը հետազոտական հետաքրքրություն ներկայացնող արդյունքներ ապահովում է դասակարգվող օբյեկտների համեմատաբար մեծ թվի և վերջինի նկատմամբ դիտարկվող ցուցանիշների էականորեն փոքր շրջանակի պարագայում: Այս առումով, ՀՀ մարզերի և ք. Երևանի ընդգրկմամբ կլաստերային վերլուծությունը թիրախային և հետազոտական հետաքրքրություն ներկայացնող արդյունքների ապահովումից բավականին հեռու է:
4. Աշխատանքում, ընդհանուր առմամբ, կիրառվել են մեծ թվով մեթոդական մոտեցումներ, գործիքներ, որոնց միջոցով հաշվարկվել են ամենատարբեր ցուցանիշներ, դուրս են բերվել տարբեր ցուցանիշների փոխկապվածությունը նկարագրող մոդելներ: Կարծում ենք, որ մոդելների կառուցումը և ցուցանիշների հաշվարկը ուսումնասիրվող խնդրի

շրջանակներում պետք է դիտարկել ոչ թե որպես նկատակ, այլ միջոց՝ հետազոտվող օբյեկտի առնչությամբ նոր հիմնախնդիրների վերհանման, որևէ թաքնված միտման բացահայտման կամ նմանատիպ այլ արդյունքների կենսագործման համար: Կարծում ենք, որ աշխատանքի առանձին հատվածներում ստացված թվային տվյալների, վերհանված փոխկապվածությունների տրամաբանությունից բխող վերլուծությունները օժտված չեն բավարար խորությամբ: Հակառակ պարագայում՝ աշխատանքում ստացված արդյունքների կիրառական տիրույթն անհամեմատ ավելի լայն կլիներ:

5. Եզրակացություններում ամփոփված դրույթները գլխավորապես ՀՀ-ում մանկամահացության իրավիճակի, դրա այս կամ այս դիտակետից նկարագրություն են ենթադրում: Ցանկալի կլիներ, որ եզրակացություններում արվեին նաև որոշ հետևություններ, առաջարկություններ, որոնք բխում են իրավիճակի վերլուծությունից: Բացի այդ, որոշ գնահատականներ կառուցված են բացարձակ մեծությամբ փոքր թվով, այսինքն՝ զանգվածային բնույթ չկրող դեպքերի, պատահարների վերլուծության վրա (օրինակ, աշխատանքում խոսվում է մարսողական օրգանների հիվանդություններից մանկամահացության ամառային վերելքների մասին, նույն հենքի վրա այլ դատողություններ, գնահատականներ ևս արվում են, մինչդեռ մարսողական օրգանների հիվանդություններից մանկական մահերի թիվը դիտարկվող ժամանակահատվածում տարեկան 3-4 դեպք է կազմում): Հարկ է արձանագրել, որ վիճակագրական գնահատականների նշանակալիությունը հնարավոր է ապահովել կամ ընդհանրապես՝ դրանց կիրառելիությունը ցուցված է զանգվածային բնույթ կրող երևույթների պարագայում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում առկա խնդիրներով, բացթողումներով հանդերձ, հարկ է արձանագրել հեղինակի կողմից զգալի ծավալով ինքնուրույն աշխատանք կատարելու փաստը: Հետազոտության արդյունքների հետագա խորացումը հանրապետությունում մանկամահացության հետ կապված խնդիրներին առավել թիրախային լուծումների մշակման ընթացքում գործնական աջակցություն կարող է ապահովել:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած 8 հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության առավել էական արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի «Մանկամահացության սոցիա-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, նաև՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող հիմնական պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Մ.Քթոյան**
13 մայիսի 2022թ.

Ա.Մ. Քթոյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն.Հ.Դարբինյան**
13 մայիսի 2022թ.